

# Կիսվել Ավետարանով

**Երեց Էդվարդ Դյուբ**
Յոթանասունից

*«Ինձանից սովորեցէք . . . եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք» (Մատթեոս 11.29):*

Մարդը, ում համար ես աշխատում էի, տվեց ինձ Մորմոնի Գրքի մի օրինակ: Սակայն ես այն չկարդացի մոտ երկու տարի: Մի կիրակի ես վերցրի Մորմոնի Գիրքը և գնացի քաղաքից դուրս գտնվող երկաթգծի կայարան Զիմբաբվեում, որտեղ ես ապրում էի: Ես նստեցի և սկսեցի կարդալ:

Սկզբում դժվար էր հասկանալը: Սակայն ես կրկին ու կրկին կարդացի Ջոզեֆ Սմիթի վկայությունը: Նրա խոսքերը դիպան իմ սրտին:

Ավելի ուշ, մեկը հրավիրեց ինձ գալ եկեղեցի: Սկզբում ես անհարմար էի զգում ինձ, ուստի նստում էի հետևի շարքում: Սակայն, երբ մարդիկ սկսեցին կիսվել իրենց վկայություններով Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Մորմոնի Գրքի վերաբերյալ, ես ինչ-որ հրաշալի զգացողություն ունեցա:

Կարճ ժամանակ անց միսիոներներ եկան մեր բակ: Շուտով ես մկրտվեցի: Տարիներ անց ես պատիվ ունեցա միսիա ծառայելու և ավետարանով կիսվելու շատերի հետ:

Զիմբաբվեում Եկեղեցին շատ է աճել: Սակայն դեռևս շատ բան կարող ենք անել ավետարանով կիսվելու համար՝ անկախ մեր բնակության վայրից: Աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանեկան երեկոների միջոցով դուք կարող եք մեծացնել ձեր վկայությունը և մոտ մնալ Երկնային Հորը: Ձեր վկայությունը կարող է օրհնել շատ մարդկանց կյանքեր աշխարհով մեկ: ●

